ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ ԱՅԳԵՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

N Ե-131
11.12.2018թվ

093-41-88-00
E-mail aygeshat 10@mail.ru
aygeshatvagharshapat.armavir@mta.gov.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ի կատարումն<<Իրավական ակտերի մասին>> Հայտանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի վեցերորդ մասի Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատ համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 7-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատ համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N30-Ն որոշումը:

Միաժամանակ հայտնվում է, որ նշված որոշումը սահմանված կարգով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետականիրավական փորձաքննության;

Առդիր 113 թերթ

ԱՅԳԵՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.Կ.Հովսեփյան

2018թվական
11-ը դեկտեմբերի

գ. Այգեշատ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 12.46/22990-18
14 12 2018 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԱՅԳԵՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 7 » դեկտեմբերի 2018թ. թիվ 9 -Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածներով.

*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատ համայնքի 2019 թվականի բյուջեն՝ եկամուտների գծով՝ 46532,0 հազար դրամ, ծախսերի գծով՝ 46532,0 հազար դրամ, դեֆիցիտը /պակասորդ/ 0.0 հազար դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:

4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:
5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասորդը/՝ համաձայն հատված 4-ի:
6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի / պակասորդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի:
7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:
8. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև:
9. Սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել չափաքանակների 50 տոկոսը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. Հովսեփյան Արթուր
2. Հովսեփյան Դանիել
3. Բաբայան Մխիթար
4. Եղիազարյան Արթուր
5. Զաքարյան Աղասի
6. Գասպարյան Սարգիս

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

2018 թվականի դեկտեմբերի 7
Այգեշատ համայնք